Հակահայկական տրամադրություններ Աբխազիայում Թուրքիա–ՌԴ առճակատման համատեքստում

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 27.02.2025 թ.[1]

Աբխազիայում իրավիճակը ծայրահեղ լարվել է 01.03.2025 թ. նշանակված արտահերթ նախագահական ընտրությունների երկրորդ փուլի նախաշեմին: Արտահերթ ընտրությունների առաջին փուլը տեղի է ունեցել 15.02.2025 թ., որի արդյունքներով նախագահի թեկնածուներ Բադրա Գունբան և Ադգուր Արձինբան, հավաքելով ամենաշատ ձայները (համապատասխանաբար 46,38% և 36,92%), շարունակեցին իրենց մրցակցությունը[2]:

Դատելով ըստ Աբխազիայից եկող լուրերի՝ հանրապետությունում լարվածությունը մեծացել է թեկնածու Ադգուր Արձինբայի գլխավորած ընդդիմության այն մտավախության պատճառով, թե երկրորդ փուլում հայերի ձայները բեկումնային կլինեն և վստահ հաղթանակ կապահովեն ռուսամետ կողմնորոշում ունեցող Բադրա Գունբայի համար: Դրա հետ կապված՝ ընդդիմությունը, դիրքավորվելով որպես տիտղոսակիր աբխազական էթնոսի շահերի պաշտպան, շանտաժի և ահաբեկման արշավ է սկսել Աբխազիայի հայ համայնքի և ողջ հայ բնակչության դեմ[3]:

Հարկ է ընդգծել, որ ոչ բոլոր էթնիկ հայերն են պաշտպանում ռուսամետ թեկնածու Գունբային, ինչի հետևանքով նրա աբխազ կողմնակիցները որոշ դեպքերում դիմում են նաև Ադգուր Արձինբայի հայ համախոհներին ահաբեկելու և նույնիսկ ծեծի ենթարկելու մեթոդներին[4]: Փաստերը ցույց են տալիս, որ Աբխազիայի հայ բնակչությունը հայտնվել է իշխանության համար կատաղի և ոչ միշտ սահմանադրական նորմերին համապատասխանող պայքար մղող հանրապետության քաղաքական ուժերի ճնշման ներքո: Իսկ հայկական գործոնն արդեն դարձել է Աբխազիայի ներքաղաքական օրակարգի կարևոր բաղադրիչ, սակայն՝ բացասական համատեքստում: Խոսքն, ըստ էության, ազգամիջյան բախումներ հրահրելու մասին է, որը հղի է ծանր հետևանքներով

---

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 24.02.2025 թ.:

[2] «Աբխազիայի ԿԸՀ-ն նախագահական ընտրությունների երկրորդ փուլը նշանակել է մարտի 1-ին»: Известия (ռուս.), 18.02.2025, https://iz.ru/1841273/2025-02-18/tcik-abkhazii-naznachil-vtoroi-tur-vyborov-prezidenta-na-1-marta/ (բեռնման օրը՝ 23.02.2025):

[3] «Հայերի նկատմամբ սպառնալիքներ և անվտանգության աշխատակիցների պաշտոնանկություն. ի՞նչ է կատարվում Աբխազիայում ընտրությունների առաջին փուլից հետո», Sputnik Armenia (ռուս.), 18.02.2025, https://am.sputniknews.ru/20250218/ugrozy-v-adres-armyan-i-uvolnenie-silovikov-chto-proiskhodit-v-abkhazii-posle-i-tura-vyborov-85923881.html (բեռնման օրը՝ 23.02.2025):

[4] «ՁԼՄ. Գագրայի շրջանի վարչակազմի ղեկավարը հարձակում է կազմակերպել Ադգուր Արձինբայի աջակցի վրա»: Эхо Кавказа, (ռուս.), 16.02.2025, https://www.ekhokavkaza.com/a/glava-administratsii-gagrskogo-rayona-organizoval-napadenie-na-storonnika-adgura-ardzinba/33316804.html/ (բեռնման օրը՝ 23.02.2025):

ոչ միայն հայ փոքրամասնության, այլև հենց աբխազների ու նրանց փխրուն պետականության համար:

Հարկ է հուսալ, որ այդ սպառնալիքների գիտակցումն առկա է աբխազական հանրության լայն շերտերում, հատկապես հաշվի առնելով այն դերը, որ հայերը խաղացել են 1990-ականներին Աբխազիայի անկախության համար մղվող պայքարում: Սակայն հանրապետության քաղաքական և հասարակական կյանքին արտաքին միջամտությունը սպառնում է պրագմատիզմին և հայերի նկատմամբ ավանդաբար հանդուրժողական վերաբերմունքին: Ժամանակին միջազգային ճանաչման ձգտող Աբխազիան աբխազա-հայկական քաղաքացիական դաշինքը դրական լույսի ներքո էր ներկայացնում: Սակայն այժմ այն լուրջ փորձության է ենթարկվում: Խոսքը Աբխազիայում իր ներկայությունն ընդլայնելու և, ըստ էության, Թուրքիայի կողմից դրա վրա վերահսկողություն սահմանելու բացահայտ փորձերի մասին է՝ օգտագործելով իր արտաքին քաղաքականության մեջ հղկված ազգամիջյան գժտություն բորբոքելու մեթոդը:

Այն, որ Աբխազիայի վերջին իրադարձությունների հետևում կանգնած է Անկարան, արդեն բացահայտորեն խոստովանել են վրացի, ռուս և բազմաթիվ աբխազ քաղաքական գործիչներ ու փորձագետներ: ԱՌՎԱԿ կենտրոնն իր նախորդ հրապարակումներից մեկում լուսաբանել է այս թեման, մասնավորապես, ուշադրություն հրավիրելով Աբխազիայի քաղաքական, սոցիալական և տնտեսական կյանք ներթափանցելու թուրքական հատուկ ծառայությունների և այլ պետական կառույցների երկարաժամկետ աշխատանքի վրա՝ թիրախավորելով դրա արտաքին քաղաքական կողմնորոշման փոփոխումը:

Մոսկվային հայտնի է թուրքական կառույցների ակտիվությունը, սակայն Անկարայի հետ մերձեցման ռազմավարության շրջանակներում նա առանձնապես չխոչընդոտեց աբխազական ուղու վրա դրանց քայլերը՝ գուցե և համոզված լինելով, որ վերահսկում է տեղի իրավիճակը և թույլ չի տա Անկարային հատել «*կարմիր գծերը*»: Այնուամենայնիվ, Թուրքիայի «*Ազգայնական շարժում կուսակցության*» առաջնորդ Ռեջեփ Էրդողանի մերձավոր դաշնակից Դովլեթ Բահչելիի ԱԳ նախարար Հաքան Ֆիդանին ուղղված գաղտնի նամակը, որ վերջերս է հրապարակվել և որում նա կոչ է անում նպաստել Աբխազիայում հակահայկական ելույթների ծրագրին, ցույց տվեց, որ Թուրքիան գործնականում արդեն հատել է այդ «*կարմիր գծերը*»[5]:

Փաստորեն, խոսքը վերաբերում է Թուրքիայի կողմից Ռուսաստանի ռազմավարական շահերի և իրավասության գոտուն ուղիղ և կոպիտ միջամտությանը՝

[5] «Բահչելիի նամակը Ֆիդանին. «Աբխազիայի հայ համայնքի ազդեցությունը քաղաքական գործընթացների վրա և Հայոց ցեղասպանության հարցի օգտագործումը խոչընդոտում են Անկարայի նախաձեռնություններին աջակցմանը»: Առավոտ, 27.01.2025, https://ru.aravot.am/2025/01/27/445976/ (բեռնման օրը՝ 24.02.2025):

փորձելով ազգամիջյան գժտության դավագրգռմամբ և հայ բնակչության ջարդերի միջոցով պայթեցնել իրավիճակն Աբխազիայում: Աբխազական հանրության «*ազգայնականներին*» համակրող հատվածը ակնհայտորեն կարծում է, որ նրանց կողմից սկսված հակահայկական արշավը թելադրված է Սուխումի շահերով, որը հայկական միջավայրում ռուսամետ տրամադրությունների պատճառով չի կարող իրեն ազատել Մոսկվայի և իշխանությունում նրա «դրածոների» ավելորդ «*ապակառուցողական ազդեցությունից*»:

Աբխազական հանրությունն իսկապես դժգոհ է Սուխումի վրա ՌԴ չափազանց մեծ ազդեցությունից, ինչը, սակայն, ռուս-աբխազական «*դաշնակցային*» հարաբերությունների տարիների ընթացքում չի նպաստել հանրապետության տնտեսական զարգացմանը, նրա բնակչության կենսապայմանների բարելավմանը կամ կառավարման համակարգի արդիականացմանը[6]: Չնայած առկա հնարավորություններին և Սուխումին հատկացված լրավճարներին, Մոսկվան «*չհասցրեց*» Աբխազիան նրա հարևան ռուսական շրջանների զարգացման մակարդակին և սահմանափակվեց որոշ տեղական շրջանների օժանդակմամբ, որոնց միջոցով փորձում էր քաղաքական վերահսկողություն իրականացնել Սուխումի վրա: Վերջին տարիներին ՌԴ-ն նախաձեռնել է Աբխազիայի պաշարների (հողեր, գազի հանքավայրեր Սև ծովում և զբոսաշրջային ոլորտ) յուրացման քաղաքականություն՝ հենվելով Մոսկվայի հետ քաղաքական և ֆինանսական շահերով կապված տեղական շրջանների վրա:

Չնայած տեղացի սեփական հովանավորյալների թույլ դիմադրությանը, որոնք գիտակցում են, որ Մոսկվայի խնդրանքները հանրապետության բնակչությանը կտրամադրեն իրենց դեմ, ՌԴ-ն, սկսած 2020 թվականից, մեծացրեց ճնշումը Սուխումի վրա՝ ստիպելով նրան 2024 թ. աշնանը վավերացնել Աբխազիայի պետական անշարժ գույքի շուկայում ռուսական ներդրումների գործնական մենաշնորհի մասին համաձայնագիրը[7]: Համաձայնագիրը 2024 թ. նոյեմբերին Աբխազիայում հակակառավարական բողոքի ձեռնարկների խթան ձգան դարձավ, որոնք արտաքուստ ղեկավարում էին ընդդիմադիր աբխազ ազգայնականները, բայց, ինչպես ցույց են տալիս փաստերը, դրանք վերահսկվում են թուրքական կենտրոններից: Արդյունքում հանրապետության ռուսամետ իշխանությունները հրաժարական տվեցին, իսկ ցուցարարների հետ բանակցությունների արդյունքում ընտրված ժամանակավոր

[6] «Ռուսաստանի հետ, բայց առանց. ինչպե՞ս կավարտվի քաղաքական ճգնաժամն Աբխազիայում»: Carnegie Endowment, 21.11.2024, https://carnegieendowment.org/russia-eurasia/politika/2024/11/russia-abkhazia-relationships-future?lang=ru/ (բեռնման օրը՝ 24.02.2025):

[7] «Ռուսաստանն ու Աբխազիան ստորագրեցին փոխշահավետ ներդրումային համաձայնագիր»: Ռուսաստանի Դաշնության տնտեսական զարգացման նախարարություն (ռուս.), 30.10.2024, https://www.economy.gov.ru/material/news/rossiya_i_abhaziya_podpisali_vzaimovygodnoeinvesticionnoe_soglashenie.html (բեռնման օրը՝ 24.02.2025):

ղեկավարությունը հանրապետության սահմանադրությանը համապատասխան նշանակեց արտահերթ նախագահական ընտրություններ:

2024 թ. աշնանից ի վեր Աբխազիայում տեղի ունեցող իրադարձությունների ծավալներն ու յուրահատկությունը թույլ են տալիս արձանագրել, որ խնդիրը դուրս է եկել ներքաղաքական շրջանակներից և այլևս չի տեղավորվում ռուս-աբխազական հարաբերությունների հոլովույթում: Թուրքիան գրեթե բացահայտորեն ցուցադրում է իր մասնակցությունը տեղի ունեցող գործընթացներին և աբխազական ուղղությունը վերածում է ՌԴ-ի հետ աշխարհաքաղաքական դիմակայության ճակատի «*թեժ*» հատվածի: Թերևս աբխազ ազգայնականներն Անկարայի մասնակցությամբ համակցությունը համարում են հաջող քայլ, որը կոչված է, եթե ոչ ամբողջությամբ ազատվելու ռուսական ուժեղ խնամակալությունից, ապա գոնե հավասարակշռելու այն՝ հենվելով Թուրքիայի աջակցության վրա: Մինչդեռ, եթե հաշվի առնենք Աբխազիայի ոչ միանշանակ միջազգային կարգավիճակը և հանրապետությունում ներքաղաքական հավասարակշռության փխրունությունը, ապա երկու տերությունների հակասությունների վրա խաղը կարող է ճակատագրական դառնալ Սուխումի համար: Հատկապես, եթե աբխազական միջավայրում Թուրքիայի կողմից բորբոքված հակահայկական տրամադրություններն անցնեն «*անդառնալիության կետը*»:

Տեղի հայերի՝ ժամանակակից Աբխազիայի երկրորդ ամենամեծ էթնիկ խմբի վրա ճնշումն արդեն իսկ հղի է աբխազական եզակի հասարակության ամբողջականության խաթարմամբ և աբխազական պետականության հաստատության աստիճանական անկմամբ՝ պետականություն, որը հավակնում է լինել ժողովրդավարական և հանդուրժողական: Հայերը, ովքեր կանգնած էին աբխազական նորագույն պետականության և դրա ինքնիշխանության ակունքներում, ըստ էության երբեք չհավակնեցին Աբխազիայի քաղաքական վերնախավում իրենց թվաքանակին և ներդրմանը համարժեք ներկայացվածության իրավունքին: Միևնույն ժամանակ, հանրապետության կյանքում իրենց ներկայությամբ հնարավորություն տվեցին կառուցելու բազմազգ պետության և հասարակության սեփական մոդելը: Աբխազական հասարակության հայկական շերտին հասցված հարվածը կլինի հարված հենց աբխազական պետության կազմավորման պատմությանը, անկախության և արդարության համար մղված պայքարի բարոյական և էթիկական հիմքերին:

Թուրքիայի առաջարկը, որն ըստ էության ենթադրում է Աբխազիայի քաղաքական վերաձևակերպումը միազգյա (մոնոէթնիկ) հանրապետության՝ Թուրքիայից եկած աբխազ մուհաջիրների հաշվին նրա ժողովրդագրական կազմի հետագա փոփոխությամբ, չափազանց վտանգավոր նախագիծ է: Անկարան այսպիսով ձգտում է Աբխազիան վերածել Սև ծովի ափի հարմար ցատկահարթակի՝ դեպի իսլամական Հյուսիսային Կովկաս ապագա քաղաքական և գաղափարական էքսպանսիայի համար:

Ռուսաստանը չի կարող չտեսնել իր ազգային անվտանգությանն ու ինքնիշխանությանը սպառնացող նման վտանգները, և կարելի է ակնկալել, որ կդիմի արմատական հակաքայլերի, ներառյալ ուժի կիրառման և Աբխազիայի անկախության ճանաչման հռչակագրի հետկանչման: Հատկանշական է, որ Թուրքիան, որն աբխազական հասարակությանը հրահրում է արմատապես հեռանալ ՌԴ-ից, մինչ օրս չի ճանաչել Աբխազիայի անկախությունը՝ չնայած 2008 թվականից ի վեր այն կատարելու իր խոստումներին: Այս համատեքստում միանգամայն տրամաբանական է թվում փորձագետների կարծիքը, որոնք պնդում են, որ Անկարան ցանկանում է հասնել Աբխազիայի պաշտոնական վերաինտեգրմանը Վրաստանին՝ տարածաշրջանը «*երկրորդ Աջարիայի*» վերածելու մտադրությամբ, որը փաստացի գտնվում է Թուրքիայի հովանավորության ներքո:

Այսպես թե այնպես՝ Աբխազիայի շուրջ հետագա զարգացումների մասին կարելի է դատել քվեարկության երկրորդ փուլից հետո: Պաշտոնական Մոսկվան դեռ զուսպ է իր հռետորաբանության մեջ և աբխազական իրադարձությունները չի դիտարկում ռուս-թուրքական գլոբալ առճակատման հարացույցում: Ռուսաստանը դեռ սպասում է: Իսկ Աբխազիայի վերջին իրադարձություններին նրա միակ արձագանքը ՌԴ Քննչական կոմիտեի ղեկավար Ալեքսանդր Բաստրիկինի կարգադրությունն էր՝ կազմակերպել Աբխազիայում «*Ռուսաստանի քաղաքացիների իրավունքների նկատմամբ սպառնալիքների և դրանց ոտնահարման փաստի դատավարական հետաքննություն*»[8]: Խոսքը վերաբերում է աբխազահայերին, որոնց ճնշող մեծամասնությունը, ինչպես և աբխազները, ունեն ռուսական անձնագրեր և քաղաքացիություն:

[8] «Բաստրիկինը հանձնարարել է հետաքննել Աբխազիայում ռուսաստանցիների իրավունքների խախտման փաստը»: Ведомости (ռուս.), 17.02.2025, https://www.vedomosti.ru/society/articles/2025/02/17/1092728-bastrikin-proverku-abhazii/ (բեռնման օրը՝ 24.02.2025):